

տեղալըլլայնէ պէտքչէ տեսնէ կամ լսէ այնպիսի անվայել գործքեր ու ծուռ սկզբունքներ որ զինքն ալկրնան մոլոցընել :

Ուստի պէտք է որ ծնողք տղոց առջե որ և իցէ մարդու վրայ գէշ խօսելէն զգուշանան . ապա թէ ոչ՝ տղաքն ալնոյն կերպերը սորվելով, երբ-որ մեծնալու ըլլան՝ իրենք ալուրիշի վրայ արհամարհանօք կը խօսին . ա-սով ընկերութեան մէջէն սէրն ու համարմունքը կը վերնայ և ընկերու-թիւնը կը քակուի :

Փափկութի , աղքատներուն դէմ խստասիրտ ըլլալ, որկրամոլութիւն , գողութիւն , և ուրիշ ասոնց նման ախտերը շատ անգամ ծնողք տղոց առջեը համարձակ կ'ընեն . անով խեղչ տղաքն ալնոյն ախտերուն տէր կ'ըլլան :

Տղոց առջե իրարու հետ կոիւ ընելը, մանաւանդ նախատական խօս-քերով, շատ վնասակար է տղոցը . վա-զի անով տղաք ծնողացը վրայ ունե-ցած համարմունքնին կը կորսընցը-նեն . անկէ աս մեծ վնասներն ալ կը ծագին , որ մեծնալէն վերջը իրենց ծնողաց խօսքերը մաիկ չեն ըներ , ի-րենք ալ կը վարժին ուրիշներու հետ կոիւ ընելու , և նոյնպէս անարգանօք վարուելու պատուաւոր անձանց հետ ալ . քաղաքական և աստուածային օ-րինաց ալչեն հնագանդիր , ու սաս-տիկ արհամարհոտ կ'ըլլան :

## ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՎԿԱՌԻԹԻՒՆ



ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

( Պէսսա :

ՈՒՐԱՍՏԱՏԱՆԻ Երրորդ գլխաւոր քաղաքը սեպուած է հիմա ( Պէս-սան , Փեթրպուրկը առաջին՝ ու Առ-քուան երկրորդ դնելով : Իսիկայ յի-սուն տարի առաջ խեղչ ողորմելի

գեղ մըն էր որ լիոձապէյ կ'ըսուէր , ու բնակիչները իջաթար էին՝ քանի մը տնակներու մէջ բնակած . իսկ հիմա լրւրոպայի խիստ գեղեցիկ ու բանուկ քաղաքներէն մէկն եղած է , և գրե-թէ 70,000 բնակիչ ունի : Լյորոր լա-տարինէ Բ կայսրու հին 1793 գնաց լորիմ ու մօտ տեղուանքը քալեց , Ոիշըլիէօ անունով գաղղիացի դքսին խորհրդովը աս նոր քաղաքին հիմը ձգեց . և որովհետև կը կարծուի թէ հին ատեն Յունաց ( Պէսսա : ըսած քաղաքը ան կողմերը կ'ինար , ասոր ալ անունը ( Պէսսա գրաւ : Փողոց-ները լայն ու շատը քարայատակ են , բոլոր տները կանոնաւոր ու մեծա-շէն , խանութները հարուստ , եկե-ղեցիները գեղեցիկ . բայց ամենէն ա-ւելի գեղեցիկ կտորը ծովեզերեայ ճե-մելիքն է , որ փառաւոր պալատներով ու շատ ծառերով զարդարուած ըլլա-լովը՝ ծովուն կողմէն եկողին միտքն ու աչքը կը զմայլեցընեն : Ինակիչներուն գրեթէ երրորդ մասը օտարազգի են , ցա գերմանացի , իտալացի , գաղ-ղիացի և յոյն . մեր ազգէն ալ 50 տունի չափ կան՝ որ Ուլահի կողմերէն եկած են հոն : Իսքաղքիս վաճառականուիլ խիստ բանուկ է , մանաւանդ որ 1817 ՚ի վեր ազատ նաւահանգիստ եղած է 30 տարուան համար : Ուուսաստա-նի բոլոր հարաւային կողմերէն վա-ճառքները հոն կ'իջնան , դրսէն ալ Ու ծովին նեղուցէն ու բոլոր ներսի նաւահանգիստներէն նաւերը ( Պէս-սա կուգան : Պօլիսէն ալ հոն քանի մը տարի է որ շոգենաւ կը բանի 16 օրը մէյմը , ու երկու օրուան մէջ կը հասնի :

Հրապարակական շէնքերուն մէջ երեւելի են Ոիշըլիէօի վարժարանը , մաքսատունը , դրամատունը , արևե-լեան լեզուաց ուսումնարանը , տնկա-րանական պարտէզը , թէատրոնը , հա-րաւային Ուուսաստանի հնութեանց պահարանը , այլ և այլ դպրոցները , ընկերութիւնները և այլն : Իոլոր հարաւային Ուուսաստանի զինուորա-



( ) բեսսա :

կան կուսական ալ ( )տեսսա կը կե-  
նայ : ( ատ ծաղկեցուց աս քաղաքը  
նաև լ ոռոնցով կոմը , որ իրեն լու-  
սաւորեալ կրթութեամբն ու իմաս-  
տուն կառավարութեամբը սիրելի է  
իրեններուն , և պատկառելի օտարաց  
առջելը : ( )տեսսան աղուոր օրինակ  
ու ապացոյց է թէ գործունեութք ու  
խելքով և ազատութիններով ինչպէս  
գեղերը քաղաք կը դառնան , ու քա-  
ղաքները մայրաքաղաք . անոր ներհակ

աս ալ կ'իմացընէ թէ ներհական պա-  
կասութիւններով ինչպէս մեծամեծ  
մայրաքաղաքները կամաց կամաց մէյ-  
մէկ գեղ ու անապատիդարձեր են ա-  
տենով ու կը դառնան : լ քեելք պտը-  
տողը կարծէ թէ հոն ոչ երբեք մեծա-  
մեծ քաղաքներ եղեր են . լյուրոպա  
քալողն ալ միտքը կը գնէ թէ միշտ ա-  
նանկ ծաղկած է եղեր : լյորկու կար-  
ծիքին ալ ծուութիւնը պատմութիւն  
ներեն կ'իմացուի :